# ՄԱՆՐ ԳԻՏԵԼԻՔ

## ԱԶԳԱՅԻՆ ԿԱՄ ՀԱՅԱԽՕՍ ԱՌԱԾՔ

ԲՈՒԼԲՈՒԼԸ իր տարտը 1 կը լայ, ագռաւը զռա զռա կ'անի:
Բարեկամի հետ կերուխում արա, առուտուր մի անիլ:
Բըրըգին կուլայ 2 չի ըլլըլ:
Բոշկը 3 որքան սէհրակ 4 ըլլի, էնքան գլուխը մեծ կը բանի:
Բզի 5 գլխին բանչքով 6 չի տրվիլ:
Գիժը 7 գնաց հարսանիք, սանց էս լաւ ա քան մեր տունը:
Գժի աղունը Աստուած կ'աղայ:
Գիլի 8 գլխին աւետարան կարդացին, ասաց՝ թէզ արա, ոչխարը գնաց:
Գիլիցը տամազլը չի ըլլըլ,
Գլխու տալու վէքիլն ես, աչքիս դուս գալու վէքիլը չես:
Գոմշատիրուջը կաշի փոխ կը տան:
Դուռդ փակ պահիր, հարևանդ 9 գող մի բանիլ:

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

### Ձէթ վառելու խնայութիւն:

ՀԱՍԱՐԱԿ աղը ջրի մէջ ցյագ լուծէ ու թղթէ կամ բարակ լաթէ անցընելէն ետև պատրոյկ մը մէջը թաթխէ ու աղէկ մը չորցուր: Վերջէն հաւասար չափով ձէթ ու այս լուծուած աղէն առ իրարու հետ խառնէ ու աղէկ մը շարժէ և թող տուր որ ձէթը ջրին երեսն ելլէ. ետքը ձէթը ջրէն բաժնելով կանթեղին մէջ լից ու պատրաստած պատրոյկդ մէջը դրած վառէ: Այս կերպով պատրաստուած կանթեղը կենդանի լոյս մը կ'ունենայ առանց ծուխ հանելու, և եղն ալ հասարակ եղէն շատ աւելի կը դիմանայ:

## ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

### Գաղթականութիւն 'ի հիւսիսային Ամերիկա:

ՄԻԱՑԵԱԼ Նահանգաց ծերակուտի խորհրդարանին հետևեալ ամփոփը ներկայացաւ, որուն մէջ կը տեսնուի թէ 1849ին Նոր Եորքի նաւահանգիստը որչափ գաղթական հասեր են: Ասոնց մէջէն 112,591 հոգի Իռլանտայէն են, 55,705 հոգի Գերմանիայէն, 28,321 հոգի Անգղիայէն. 8,390 հոգի Սկովտիայէն, 3,300 հոգի Նորվէկիայէն, 2,583 հոգի Գաղղիայէն, 2,447 հոգի Հոլանտայէն, 1,782 հոգի Կալլեսի երկրէն, 1,405 հոգի Զուիցերիէն, 1,007 հոգի Շուետէն, 602 հոգի Իտալիայէն, 449 հոգի Արևմտեան Հնդկաստանէն, 287 հոգի Փորթուկալէն, 214 հոգի Սպանիայէն, 172 հոգի Սարդենիայէն, 150 հոգի Տանիմարքայէն, 151 հոգի Նոր Սկովտիայէն, 133 հոգի Լեհաստանէն, 118 հոգի Պելճիայէն, 55 հոգի Գանատայէն, 38 հոգի Ռուսաստանէն, 34 հոգի Արևելեան Հնդկաստանէն, 33 հոգի Հարաւային Ամերիկայէն, 23 հոգի Մեքսիկոյէն, 20 հոգի Սիկիլիայէն, 9 հոգի Ճենաստանէն, 8 հոգի Արաբիայէն, 6 հոգի Յունաստանէն, 6 հոգի Տաճկաստանէն, որ բոլորը մէկէն 220,603 հոգի կ'ընէ:

1 Տճ. Տէրտ:
2 Տճ. Կըլըճըլ պարթագ:
3 Թասակ:
4 Սէյրէկ:
5 Եզն կամ հորթ:
6 Եասմըրագ:
7 Անխմար:
8 Գայլ:
9 Դրացի:

### 1849ին մէջ բռնուած պալէնան:

ՍԷՆՏՈՒԻՉ կղզիներէն վերջին եկած լուրերը կը ծանուցանեն որ 1849ին մինչուան նոյեմբերի 17, Խաղաղական Ովկիանոսէն 450 պալէնայ որսացեր են, որոնցմէ 67,000 տակառ եղ հաներ են:

## ԲՆԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

ԽՆՁՈՐ կտոր մը ճերմակ թուղթ ջրի մէջ խոթելով առաջին սպիտակութիւնը կը կորսնցնէ. — Վասն զի լուսոյ ճառագայթները որ թրջած թղթին վրայ կը զարնեն՝ անոր ծակտիքը թափանցիկ նիւթով մը լեցուն կը գտնեն և անոր մէջ կ'ընկղմին առանց նորէն ետ դառնալու. ուստի մարմին մը որչափ մութ գոյն ունի՝ ըսել է թէ այնչափ լուսոյ ճառագայթները չանդրադարձըներ:

## ՀԱՆԵԼՈՒԿ

ՏԵՍԱՑ աղբիւր մի յանդընդոց
Սաստիկ ընէ վասն արօտոց,
Գունովըն սեաւ քան ըղներկոց
Կայ և եռայ քան ըղձըրբթոց:

ՑՈՒՆՈՒԱՐԻ ԱՌԵՂԾՈՒԱԾՆ ԷՐ
ՄԵՌԵԱԼ ԵՒ ԴԻԱԿԻՐՔ

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ՂԱԶԱՐՈՒ